ՆՈՐ ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատոր առաջին, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ., տպաքանակը՝ 30000։

Բառարանը լույս է տեսել Հայկական ՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ։ Ժամանակակից հայերենի բացատրական բառարանի պահանջը վաղուց էր զգացվում և այս բառարանը այդ բացը լրացնելու առաջին փորձն է։ Հատորն ընդգրկում է մոտավորապես 22—23 հազար բառ, որոնք օգտագործվում են ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ գրական լեզվում։ Հայ նոր գրական լեզվի արգի փուլում գործածվող բառերից ու իմաստներից բացի, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» ընդգրկում է նաև անցած տասնամյակներում (սկսած XIX դարի 70-ական թվականներից) հայ գեղարվեստական, գիտական գրականության մեջ և մամուլում գործածված բառերն ու իմաստները։ Լայնորեն օգտագործվել են խոսքի դարձվածաբանային ոճեր, առածներ, հանելուկներ և այլն։ Հատուկ ուշադրություն է դարձվել նորաստեղծ բառերի վրա, որոնք տրվում են համապատասխան բացատրություններով և օրինակներով։

Հատորի գլխավոր խմբագիրն է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ս. Ղարիբյանը։

ԳԱՌՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ — «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության», հատոր երկրորդ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ., տպաքանակը՝ 2000, 446 էջ։

Այս հատորը շարունակում է արևմտահայ թատրոնի պատմությունը 1880-ական թվականներից։ Մենագրության առաջին հատորը, որ լույս է տեսել 1962 թվականին, ավարտվում է արևմտահայ թատրոնի 1870-ական թվականների պատմությամբ։ Այնտեղ հեղինակը մանրամասնորեն շարադրել է արևմտահայ թատրոնի պատմությունը սկզբից մինչև ռուս-թուրքական պատերազմի տարիները և քննության է առել հիմնականում «Արևելյան թատրոնի» հետ կապված հարցերը։

Երկրորդ հատորի զգալի մասը Գառնիկ Ստեփանյանը հատկացրել է Հակոբ Վարդովյանի թատերախմբի տասնհինգամյա գործունեությանը, որի մասին մինչև այժմ կցկտուր հիշատակություններ են միայն տպագրվել։ Գրքի առաջին գլուխը հենց այդպես էլ վերնագրված է՝ «Վարդովյանի թատերախումբ», որտեղ տրված է թատերախմբի ընդհանուր բնութագիրը, ապա քննվում է թատերախմբի 1868—1872 և 1872—1876 թվականների գործունեությունը, թուրքական թատրոնի սկզբնավորման հարցը և այլն։

Երկրորդ գլուխը կոչվում է «Արևմտահայերի երաժշտական թատրոնը»։ Այստեղ խոսվում է ուսումնասիրվող ժամանակաշրջանի երաժշտական կյանքի, Տիգրան Չուխաջյանի օպերետաների, Ս. Պենկլյանի ղեկավարությամբ գործող հայկական օպերետային թատերախմբի տասնամյա գործունեության և երաժշտական թատրոնի հիմնական ուժերի մասին։

Երրորդ «Ֆասուլաճյան թատերախումբ» գլխում նկարագրվում են այդ թատերախմբի բեմական առաջին քայլերը և ուղևորությունը դեպի Ռուսաստան։

«Ադամյանական շրջան», այսպես է կոչվում մենագրության չորրորդ գլուխը, ուր հեղինակը տալիս է ժամանակաշրջանի ընդհանուր բնութագիրը, ապա խոսում է Պետրոս Ադամյանի պոլսահայ բեմում կատարած դերերի, Արամ Վրույրի թատերական փորձերի, Ադամյանի մահվան և Թովմաս Ֆասուլաճյանի կազմակերպած ներկայացումների մասին։

Վերջին, հինգերորդ գլուխը նվիրված է «Մնակյանական թատերախմբին»։ Թատերախմբի ընդհանուր բնութագիրը տալուց հետո հեղինակը այստեղ անդրադառնում է Մ. Մնակյանի 1860—1870-ական թվականների բեմական գործունեությանը, ապա օսմանյան դրամատիկական թատրոնի ստեղծման հարցին։ Քանի որ հեղինակին զբաղեցնող շրջանին է վերաբերում թուրքական թատրոնի սկզբնավորումը, կապված Վարդովյանի ու Մնակյանի անունների հետ, ուստի նա ներկայացրել է այդ թատրոնի պատմությունը իր հիմնական գծերով, օգտագործելով թուրք և ոտար բանասերների վկայությունները։ Մշակութային այդ երևույթը Գ. Ստեփանյանը գիտում է որպես թուրքական արվեստի զարգացման գործում հայ ժողովրդի ունեցած մասնակցության

նշանակալի արտահայտություններից մեկը, միաժամանակ հայ ե թուրք թատրոնի սերտ կապի յուրօրինակ դրսևորում։

Գ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ — «Վահրամ Բաբունու փիլիսոփայությունը», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ., տպաքանակը՝ 1000, 228 էջ։

Գրքում հեղինակը կատարում է Վահրամ Բաբունու Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերում պահվող մեկուկես տասնյակից ավելի աշխատությունների քննությունը և ցույց է տալիս, որ նա եղել է իր դարի գիտական-փիլիսոփայական մտքին լավատեղյակ և բաղմակողմանիորեն զարգացած մտածող։

Վահրամ Բաբունին ապրել է 13-րդ դարում և եղել է Կիլիկիայի հայկական թագավորության մտավորականներից ու հասարակական-քաղաքական գործիչներից։ Նա մեկն էր միջնադարյան այն մատենագիրներից, որոնց աշխատությունների մեծ մասը նվիրված է փիլիսոփայական-գիտական խնդիրների մեկնաբանմանը։ Բաբունին հանդիսանում է նոմինալիստական ուղղության ամենաականավոր ներկայացուցիչներից մեկը Հայաստանում և այդ ուղղության սկզբնավորողը հայ իրականության մեջ։ Նրա նոմինալիզմը հիմք է հանդիսացել իմացաբանական և տրամաբանական շատ խնդիրների մատերիալիստական լուծման համար։

Մենագրությունը բաղկացած է երեք գլխից։ Առաջինը նվիրված է Վահրամ Բաբունու ժամանակաշրջանի, կյանքի ու գրական ժառանգության քննությանը։ Երկրորդում հեղինակը հանգամանորեն կանգ է առել Բաբունու նոմինալիզմի վրա։ Իսկ երրորդ գլխում խոսվում է Բաբունու իմացաբանական ու տրամաբանական հայացքների մասին։

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ — «Շեքսպիրի մասին», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969, տպաքանակը՝ 6000, 100 էջ։

Թումանյանը Շեքսպիրի ստեղծագործություններին առաջին անգամ ծանոթացել է 1886 թվականին, երբ Պ. Ադամյանը Թիֆլիսում հանգես է եկել Համլետի դերակատարումով։ Մեծ բանաստեղծը այնքան է հրապուրվել շեքսպիրյան կերպարներով, որ նրանց ազդեցությամբ սկսել է գրել դրամաներ, սակայն գրած դրամաները ոչնչացրել է, որովհետև իր իսկ խոստովանությամբ՝ «Շեքսպիրի գրածների նման չէին դուրս եկել»։

«Շեքսպիրի մասին» այս գրքույկում ամփոփված են Հովհ. Թումանյանի տարբեր ժամանակներ և տարբեր առիթներով գրած հոդվածները, ինչպիսիք են՝ «Համլետ» ողբերգություն Շեքսպիրի», «Շեքսբիր, Համլետ», «Համլետի» շարշ սրանքի շաբաթը Թիֆլիսում» և այլն։

Աշխատությունը բացվում է Ա. Ինճիկյանի ընդարձակ առաջաբանով, խմբագիրն է Ռուբեն Զարյանը։